Արձանագրություն N 2-1

ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-26/8 ծածկագրով ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի Շամուտ բնակավայրում Ստեփան Սարգսյանի անվան ըմբշամարտի մարզադահլիճի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան

06.05.2026թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Աղայանց

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Քոչարյան
Հ. Գինովյան
Տ. Կոմիտասյան
Ա. Մարգարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հակոբյան

1. **Գնման ընթացակարգի հայտերի բացման օրվա և ժամի, ինչպես նաև՝ հայտ ներկայացրած մասնակիցների մասին**

(Մ. Աղայանց)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել,

բ) գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով 2026 թվականի մայիսի 6-ին, ժամը 10:00-ին,

գ) գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Նախահաշվային գին	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	«Նորաշեն» ՆՏ ԱԿ	18 000 000	15 000 000	3 000 000	18 000 000
2	«ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ		18 000 000	-	18 000 000
3	«ԼՈՒՔ» ՍՊԸ		Համակարգում փաստաթուղթ կցված չէ, հայտը մերժվում է		

1.2 Մասնակիցները հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չեն գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

1.3 «ԼՈՒՔ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային գնումների Armeps համակարգում հրավերով պահանջվող փաստաթղթերը կցված չեն եղել: ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն (համակարգում կցված չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը, այդ թվում նաև գնային առաջարկը) գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «ԼՈՒՔ» ՍՊԸ-ի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

2. Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ. հասցեն

(Մ. Աղայանց)

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գործունեության հասցե	Կապի միջոց	Էլեկտրոնային փոստի հասցե
1	«Նորաշեն» ՆՏ ԱԿ	ք. Երևան, Հալաբյան 11-36	091 50 40 09 093 50 40 09	norashendtc@gmail.com
2	«ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ	ք. Երևան, Աբովյան 29/15	094 41 82 69	nomproject@gmail.com

Ընդունվել է որոշում՝ կողմ –5, դեմ – 0:

3. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Մ. Աղայանց)

3.1 Գնահատող հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումն իրականացնել ոչ ուշ քան 2026 թվականի մայիսի 11-ին ժամը 11:00-ին::

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Մ.Աղայանց

Անդամ՝ _____ Ա. Քոչարյան

_____ Հ. Գինովյան

_____ Տ. Կոմիտասյան

_____ Ա. Մարգարյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ _____ Գ. Հակոբյան